

ՀՏԴ 342. 4

**ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ 2015  
ԹՎԱԿԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**

**ՎԱՇԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱԼ**

*Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա*

Հոդվածում ներկայացվում է ՀՀ նախագահի և Ազգային ժողովի փոխհարաբերությունները 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո: Կատարված ուսումնասիրության արդյունքում քննարկվել է խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում ՀՀ նախագահի և խորհրդարանի փոխհարաբերությունների փոփոխությունը՝ միաժամանակ որոշակի համեմատական վերլուծություն կատարելով կիսանախագահական կառավարման համակարգի պայմաններում Հանրապետության նախագահի լիազորությունների հետ: Վերլուծվել են որոշ խնդիրներ, որոնք առկա են ներկա խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում՝ միաժամանակ փորձելով դրանց հնարավոր լուծման համար ուղիներ գտնել:

**Բանալի բառեր.** ՀՀ նախագահ, Ազգային ժողով, սահմանադրական փոփոխություններ, խորհրդարանական կառավարման համակարգ, Սահմանադրություն, պետական կառավարման մոդել:

Իրավական և ժողովրդավարական պետության կառուցման գործընթացում առանքցքային նշանակություն ունի յուրաքանչյուր պետության առանձնահատկություններին համապատասխանող պետական կառավարման մոդելի ճիշտ ընտրությունը: Հատկապես նշված հիմնախնդիրն առավել արդիական է զարգացող պետությունների համար, որտեղ լայնածավալ սահմանադրական փոփոխությունների միջոցով փորձ է արվում հասնելու պետական կառավարման մոդելների կատարելագործմանը:

Բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որտեղ 1991 թվականից սկսած մինչ օրս սահմանադրական փոփոխությունների միջոցով փորձ է արվել ընտրելու պետական կառավարման առավել արդյունավետ մոդել: Վերջին՝ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում կիսանախագահա-

կան կառավարման ձևից անցում կատարվեց կառավարման խորհրդարանական համակարգի: Պետական կառավարման համակարգի փոփոխությունը «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայացեկարգ»-ում (այսուհետև՝ **Հայեցակարգ**) հիմնավորվում է կիսանախագահական կառավարման ոլորտում առկա հիմնախնդիրներով, այդ հիմնավորումներում հատկապես առանձնացնելով Հանրապետության նախագահի իրավական կարգավիճակի առանձնակատկություններից բխող խնդիրները [1]:

Այսօրինակ խնդրահարույց հիմնավորումներ առկա են նաև «ՀՀ սահմանադրական փոփոխությունների նախագծի հիմնավորումներ»-ում: Այդ փաստաթղթում կառավարման մոդելի փոփոխման հիմնավորումների մեջ առանձնացվում են գործող կառավարման համակարգի ինստիտուցիոնալ թերությունները: Մասնավորապես, կարելի է առանձնացնել տեղ գտած այն դրույթը, որի համաձայն **կիսանախագահական կառավարման դեպքում Հանրապետության նախագահի ձեռքում գործադիր իշխանության գերկենտրոնացման պարագայում (երբ մեծամասնությունները համընկնում են) Հանրապետության նախագահին ենթարկվում են վարչապետը, կառավարությունը և խորհրդարանական մեծամասնություն ունեցող կուսակցությունը, իսկ վարչապետի, կառավարության և խորհրդարանական մեծամասնության միջոցով իրականացվում է խորհրդարանի ենթակայությունը: Գործնականում առաջանում է «գերնախագահական» համակարգ: Վերոհիշյալ փաստաթղթում որպես «ստեղծված իրավիճակի փոփոխում» նշվում է, որ քաղաքական առումով իրավիճակը կարող է փոփոխվել, եթե երկրի կարևորագույն քաղաքական պաշտոն դիտարկվի վարչապետի, այլ ոչ թե Հանրապետության նախագահի պաշտոնը (ինչպես արևելաեվրոպական բազմաթիվ երկրներում, որոնք որդեգրել են «խորհրդարանական-նախագահական» մոդելը): Նման մոդել սահմանադրաիրավական առումով Հայաստանում նույնպես հնարավոր է, քանի որ Հանրապետության նախագահի լիազորություններն էականորեն կրճատվել են 2005 թ. բարեփոխումների ժամանակ: Եթե նման քաղաքական փոփոխություն իրականանա, ապա, թերևս, իմաստալից չի լինի Հանրապետության նախագահի ուղղակի ընտրության պահպանումը, քանի որ քաղաքականությունը որոշող հիմնական դերակատարը նա չի լինի [2]:**

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում պետական կառավարման համակարգի փոփոխությունը ստեղծեց ՀՀ նախագահի և Ազգային ժողովի իրավասությունների նոր ծավալ: Ուստի բավականին կարևորորում ենք նշված սուբյեկտների փոխհարաբերությունների հիմնախնդիրներին անդրադառնալը սահմանադրական բարեփոխումների համատեքստում:

Հանրապետության նախագահի կարգավիճակին վերաբերող դրույթները Սահմանադրության մեջ տեղ են գտել 123-րդ հոդվածում, որի համաձայն՝ Հանրապետության նախագահը պետության գլուխն է, հետևում է սահմանադրության պահպանմանը, իր լիազորություններն իրականացնելիս անաչառ է, առաջնորդվում է բացառապես համապետական և համազգային շահերով և իր գործառույթներն իրականացնում է սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով: Հանրապետության նախագահի լիազորությունները ամրագրված են հաջորդ մի քանի հոդվածներում: Մինչև սահմանադրական բարեփոխումների իրականացումը Հանրապետության նախագահի լիազորությունները ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ սահմանադրական ներկա կարգավորումներում բավականին տարբեր են լիազորությունների ծավալը:

Չթվարկելով Նախագահի բոլոր լիազորությունները մինչև վերջին սահմանադրական բարեփոխումները և դրանից հետո՝ այլ ուղղակի կատարելով վերլուծություն, անհրաժեշտ է փաստել, որ գործող սահմանադրական կարգավորումներով Հանրապետության նախագահի լիազորությունների շրջանակը բավականին նեղացված է, և նրան հնարավորություն է տրված ունենալու միայն վերահսկողական լիազորություններ, այն է՝ հետևելու Սահմանադրության պահպանմանը:

Ուստի կարելի է արձանագրել, որ սահմանադրական փոփոխություններից հետո Հանրապետության նախագահին վերապահվել է առավելապես արարողակարգային բնույթի լիազորություններ: Նման հետևության են հանգել նաև իրավաբաններ Ն. Սարգսյանը և Վ. Պողոսյանը իրենց հեղինակած աշխատության մեջ՝ նշելով, որ Հանրապետության նախագահը ունի միայն Սահմանադրության պահպանման գործառույթ [3]:

Հանրապետության նախագահի ընտրության կարգը ամրագրված է Սահմանադրության 125-րդ հոդվածում, որի համաձայն ինչպես բնորոշ է խորհրդարանական հանրապետությունների դեպքում՝ մեր երկրում նույնպես Հանրապետության նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ բացառելով նրա ուղղակի ընտրությունը քաղաքացիների կողմից: Այս կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ առկա է այն տեսակետը, ըստ որի՝ խորհրդարանական հանրապետության դեպքում Նախագահի լեգիտիմության (**օրինականության**) աստիճանն զգալիորեն ավելի նեղ է, քան նախագահական հանրապետությունում, քանի որ բնակչությունը չի մասնակցում այդ ընտրություններին [4]: Քննարկվող հոդվածում մանրամասն ներկայացված է Ազգային ժողովի կողմից Հանրապետության նախագահի հերթական ընտրության հետ կապված սահմանադրական կարգավորումները (Սահմ. հոդ. 125): Պետք է նշել, որ 2015

թվականի սահմանադրական փոփոխություններից հետո Հանրապետության նախագահի կողմից պաշտոնը ստանձնելու ընթացակարգում փոփոխություն չկա, ինչպես նախկինում՝ ներկա կարգավորմամբ նույնպես պաշտոնը ստանձնում է Ազգային ժողովի հատուկ նիստում, ժողովրդին տրված երդմամբ: Հարկ ենք համարում հավելել, որ մենք չենք կարող վստահորեն կիսել արտասահմանյան գրականության մեջ տեղ գտած այն կարծիքը, որ եթե Հանրապետության նախագահը ընտրվում է ժողովրդի կողմից, ապա լեգիտիմության մակարդակը անհամեմատ ավելի բարձր է: Նման եզրահանգում կատարելու համար հիմք է հանդիսանում հետխորհրդային երկրներում ընտրական ինստիտուտների գործունեության թերի լինելու հանգամանքը: Բնակչության՝ ընտրություններին մասնակցության դեպքում, նույնպես հնարավոր չէ բացառել, որ ընտրությունների լեգիտիմությունը կասկած չի հարուցի, քանի որ առկա է արդյունքները կեղծելու վտանգ, որը հաճախ է հանդիպում հետխորհրդային երկրներում: Ընտրական ինստիտուտների գործունեության գնահատման տեսակետից օգտակար են ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային կառույցների, հատկապես՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցները, որոնք պարունակում են ընտրությունների մասին բավականին տվյալներ, որոնց հիման վրա էլ որոշ հետազոտողներ փորձում են գնահատել իրավիճակը հետխորհրդային երկրներում: Հիմք ընդունելով ԵԱՀԿ դիտորդական եզրակացությունները՝ Մաքս Բադերը նշում է, որ հետխորհրդային տարածքն առանձնանում է իր թերի ընտրական գործընթացներով: Համեմատելով 1998-2008թթ. Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայում, Ուկրաինայում, Ռուսաստանում, Ղազախստանում, Բելառուսում, Ղրղզստանում տեղի ունեցած նախագահական և խորհրդարանական ընտրությունները՝ նա նշում է առանձին երկրներում նկատվող դանդաղ դրական տեղաշարժերի մասին՝ դանդաղության պատճառը հատկապես համարելով այդ երկրներում ձևավորված վարչակարգերի ավտորիտար բնույթը: Նրա կարծիքով այդ ժամանակահատվածում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները համարվել են մրցակցային, իսկ նախագահական ընտրությունները՝ հեգեմոնիկ [5]:

Ցանկանում ենք անդրադառնալ Հանրապետության նախագահի պաշտոնանկության հիմքերի վերաբերյալ սահմանադրական կարգավորմանը, որը մեր կարծիքով կարող է տարաբնույթ մեկնաբանություններ առաջացնել: Այսպես՝ Սահմանադրության 141-րդ հոդվածում ամրագրված է, որ Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար: Գտնում ենք, որ «կոպիտ խախտում»

Եզրույթը լայն և սուբյեկտիվ մեկնաբանման տեղիք կարող է տալ, այն կարող է տարբեր կերպ ընկալվել և մեկնաբանվել: Այս անորոշությունը կարող է մի կողմից բարդացնել նախագահին պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը, իսկ մյուս կողմից կարող է հայեցողական մեկնաբանում ստանալ և տարբեր նկատառումներից ելնելով մեկնաբանվել որպես հիմք՝ նախագահին պաշտոնանկ անելու համար: Կարծում ենք, որ Սահմանադրության մեջ տեղ գտած այդ եզրույթը մեկնաբանելիս պետք է հասկանալ այն դեպքերը, երբ նախագահը չի կատարում Սահմանադրությամբ իրեն վերապահված պարտականությունները: Շարունակելով սույն հոդվածի վերլուծությունը՝ գտնում ենք, որ առկա է մեկ այլ հիմնախնդիր ևս: Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը դիմում է Սահմանադրական դատարան, այնուհետև՝ եզրակացության հիման վրա որոշում է կայացնում Նախագահին պաշտոնանկ անելու մասին: Այստեղ հարց է առաջանում, թե Ազգային ժողովը կարող է որոշում ընդունել Նախագահին պաշտոնանկ չանելու մասին այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը եզրակացությամբ փաստում է պաշտոնանկ անելու սահմանադրական հիմքերի մասին: Այս դեպքում հնարավոր է ստեղծվել այնպես, որ ենթադրյալ հանցագործություն կատարած անձը շարունակի պաշտոնավարել: Գտնում ենք, որ այդ դեպքում կարող է ստեղծվել փակուղային իրավիճակ, և այդ հարցի լուծումը պահանջում է հետազա գիտական, մասնագիտական խորը հետազոտությունների և վերլուծությունների անհրաժեշտություն:

Փոփոխված Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետության նախագահն իր իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ կարող է ուղերձ հղել Ազգային ժողովին(Սահմ. հոդ.128): Իսկ նախկին սահմանադրական կարգավորումներով Հանրապետության նախագահը ուղերձով դիմում է ժողովրդին և Ազգային ժողովին: Սովորաբար Նախագահի ուղերձները արարողակարգային բնույթ ունեն, նորմատիվ ակտեր չեն, իրավաբանական ուժ չունեն, դրանք ծրագրային բնույթի սկզբունքներ բովանդակող քաղաքական ակտեր են, որոնք մեծ ազդեցություն կարող են գործել ինչպես օրենսդիր մարմնի, այնպես էլ երկրում հասարակական կարծիքի ձևավորման վրա: Կարծում ենք, քանի որ ուղերձը իրավաբանական ուժ չունի, հետևաբար՝ հնարավոր չէ պնդել, որ Հանրապետության նախագահի լիազորությունները ծավալային առումով փոփոխության են ենթարկվել:

ՀՀ նախագահի և Ազգային ժողովի փոխհարաբերություններում Նախագահի առանցքային լիազորությունները է համարվում Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի ստորագրումը և հրապարակումը, որը նոր

Սահմանադրությամբ բավականին այլ կարգավորում է ստացել: Այսպես, Սահմանադրության 129-րդ հոդվածի կարգավորումներին համապատասխան՝ Ազգային ժողովի ընդունած օրենքը Հանրապետության նախագահին ստորագրում և հրապարակում է քաննակարգ ժամկետում կամ նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով: Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ օրենքը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Հանրապետության նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը: Այնուհետև եթե Հանրապետության նախագահը նշված ժամկետներում չի կատարում քննարկվող հոդվածում սահմանված ժամկետները, ապա Ազգային ժողովի նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը: Փաստորեն ստացվում է այնպիսի իրավիճակ, երբ Նախագահը չունի որևէ այլ գործառույթ քան ընդունած օրենքի սահմանադրականության հարցը պարզելը, ի հակառակ նախկին սահմանադրական կարգավորումներում ունեցած լիազորության, երբ Հանրապետության նախագահը կարող էր Ազգային ժողովի կողմից ընդունած օրենքը առարկություններով ու առաջարկություններով վերադարձնել խորհրդարան՝ պահանջելով նոր քննարկում: Ավելին՝ Հանրապետության նախագահի՝ նման կարևորագույն հարցում վճռորոշ դեր ունենալու լիազորության բացակայությունն է վկայում նաև սահմանադրական այն կարգավորումը, որ եթե Հանրապետության նախագահը չի կատարում վերը նշված ժամկետում սահմանված պահանջները, ապա Ազգային ժողովի նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը:

Շարունակելով օրենսդրական գործընթացի հետ կապված գործող սահմանադրական կարգավորումների ուսումնասիրությունը՝ կարևորում ենք նաև անդրադառնալ օրենքի ընդունման ընթացակարգի վերաբերյալ պրոֆեսոր Վ. Ստեփանյանի փաստարկմանը:

Հեղինակը վերլուծելով գործող կարգավորումներն արձանագրել է, որ Հանրապետության նախագահի լիազորությունների անհաջող ձևակերպումների հետևանքով Սահմանադրության մեջ տեքստում տեղ են գտել մի շարք հակասական կամ երկիմաստ լուծումներ: Մասնավորապես, անդրադարձ է կատարել այն հանգամանքին, որ օրենսդրական գործընթացը բաղկացած է մի քանի փուլից և փաստաթուղթը դառնում է նորմատիվ իրավական ակտ (օրենք) միայն բոլոր փուլերը անցնելուց հետո, որը համընդհանուր ճանաչում ունեցող իրավաբանական աքսիոմա է: Տվյալ դեպքում օրենք է անվանվում մի փաստաթուղթ, որը դեռևս ստորագրված չէ, և հրապարակված չէ օրինագիծը: Շարունակելով իր փաստարկումը

հեղինակը նշում է, որ այդ փաստաթղթի սահմանադրականությունը ստուգելուց հետո՝ մինչև դրա հրապարակումը և ուժի մեջ մտնելը, կարող է Ազգային ժողովում դրա նոր քննարկման անհրաժեշտություն առաջանալ:

Պրոֆեսոր Վ. Ստեփանյանի բնորոշմամբ իրավաստեղծ մարմնի կամքը դեռևս պետական կամքի արտահայտություն չէ, քանի որ երբեմն կարող է անցնել բավականին երկար ժամանակ և առաջանալ նոր իրավաբանական փաստերի անհրաժեշտություն, որպեսզի իրավաստեղծ մարմնի կամքը պետական կամքի արտահայտության հատկանիշ ստանա [6]:

Փոփոխված Սահմանադրության 138-րդ հոդվածով նախատեսված է, որ Հանրապետության նախագահը իրավունք ունի նշանակել ժամանակավոր պաշտոնակատարներ որոշակի պետական պաշտոններում այն դեպքում, երբ Ազգային ժողովը ինչ-որ պատճառներով եռամսյա ժամկետում չի ընտրում համապատասխան պաշտոնատար անձանց:

Խոսքը վերաբերում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի և անդամների, Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի, Կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի անդամների, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների, Հաշվեքննիչ պալատի նախագահի և անդամների, Բարձրագույն դատական խորհրդի անդամների պաշտոններում նշանակումներ կառարելուն: Գտնում ենք, որ Նախագահի նման լիազորությունը փոփոխված Սահմանադրության մեջ ներառելը բավականին կարևոր է, քանի որ նման կարևորություն ներկայացնող պաշտոնները տևական ժամանակով թափուր մնալը մեծ ռիսկեր կարող է պարունակել: Սակայն մեր կարծիքով ավելի նպատակահարմար կլիներ, եթե նոր խմբագրությամբ Սահմանադրությունում վերը նշված պաշտոնատար անձանց թեկնածությունը Ազգային ժողովին առաջադրելու իրավունք վերապահվեր Հանրապետության նախագահին: Այդ լիազորությունը հնարավորություն կտար նախագահին ներգրավված լինելու երկրի պետական կառավարման համակարգի առանցքային նշանակություն ունեցող մարմինների ձևավորմանը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է արձանագրել, որ Սահմանադրության փոփոխություններով ՀՀ նախագահի կարգավիճակը և լիազորությունները զրեթե բոլոր ոլորտներում կրում են միայն արարողակարգային բնույթ: ՀՀ Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի երկրորդ նախնական կարծիքում նույնպես տեղ է գտել այն գնահատականը, որ Հայաստանի Հանրապետությունում նախագահի ինստիտուտը շատ ավելի թույլ է, քան բազմաթիվ այլ խորհրդարանական հանրապետություններում [7]:

Այսպիսով՝ 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունում ՀՀ նախագահի և Ազգային ժողովի փոխհարաբերությունները շատ ավելի

արարողակարգային և ձևական բնույթ են կրում: Սակայն ինչպես նշում են սահմանադրագետներ Իզենզենը և Կիրիոֆը, խորհրդարանական հանրապետություններում քաղաքական նշանակալից իշխանության բացակայությունը Նախագահի մոտ ինչ-որ առումով նրա ուժի հիմքն է, որը դրսևորվում է հասարակության քաղաքականության վրա հոգևոր ներգործությամբ: Նախագահը միավորում է այն, ինչ միավորում է բոլորին: Այդպիսով նա կարծես մարմնավորում է սահմանադրության ոգին [8]:

Այնուամենայնիվ, կարևոր է արձանագրել, որ մի շարք ոլորտներում ՀՀ նախագահի և Ազգային ժողովի փոխհարաբերությունների քննարկումը՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի իրացման կառուցակարգերի բարելավման տեսանկյունից ունի առանցքային նշանակություն: Եվ հուսով ենք, որ չնայած կառավարման խորհրդարանական համակարգին անցմամբ պայմանավորված՝ ՀՀ Ազգային ժողովի քաղաքական դերակատարության շեշտակի աճի հանգամանքը երկրի կյանքում, և միևնույն ժամանակ Հանրապետության նախագահի լիազորությունների սահմանափակումը, էական խոչընդոտ չի հանդիսանա սահմանադրական կարգավորմանը համապատասխան՝ նախագահին լինել անաչառ և առաջնորդվել բացառապես համապետական և համազգային շահերով:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», Եր., 2014, էջ 21-23, 45 էջ:
2. «ՀՀ սահմանադրական փոփոխությունների նախագծի հիմնավորումներ» 2015, էջ 17,
3. **Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան**, Հայաստանի Հանրապետության 2015 թ. Խմբագրությամբ Սահմանադրությունը համառոտ պարզաբանումներ, Եր., 2016, էջ 127-128:
4. Учебник для вузов, «Конституционное право зарубежных стран», 2004թ., с. 123.
5. **Bader M.**, Trends and Patterns in Electoral Malpractice in Post Soviet Eurasia. Journal of Eurasian Studies, 2012, 3, 49-57.
6. **Սրեփանյան Վ.**, Նախագահի իրավական կարգավիճակը ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում //«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2017 № 3 (24), էջ 20:
7. Վենետիկի հանձնաժողով, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ երկրորդ նախնական կարծիք Ստրասբուրգ, 2015, [http://moj.am/storage/uploads/nakhnakan\\_karciq1.pdf](http://moj.am/storage/uploads/nakhnakan_karciq1.pdf), էջ 13:
8. **Й. Изензее, П. Курхофф**, Государственное право Германии, Москва, 1994, էջ 238:

---

**НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ВЗАИМООТНОШЕНИЙ МЕЖДУ  
ПРЕЗИДЕНТОМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И НАЦИОНАЛЬНЫМ  
СОБРАНИЕМ В СВЕТЕ КОНСТИТУЦИОННЫХ  
ИЗМЕНЕНИЙ 2015 ГОДА**

**ВАГЕ БАГДАСАРЯН**

---

*Академия государственного управления Республики Армения*

---

В статье представлены отношения между Президентом и Парламентом РА после конституционных изменений 2015 года. В результате исследования было обсуждено изменение отношений между Президентом Республики Армения и Парламентом в условиях парламентской системы правления, при этом был проведен сравнительный анализ с полномочиями Президента Республики в условиях полупрезидентской системы правления. Были проанализированы некоторые вопросы, существующие в нынешней парламентской системе правления, и были найдены пути их решения.

**Ключевые слова:** Президент РА, Парламент, Конституционные изменения, Система парламентского управления, Конституция, Модель государственного управления.

**SOME ISSUES OF THE RELATIONS BETWEEN THE PRESIDENT OF  
THE REPUBLIC OF ARMENIA AND THE NATIONAL ASSEMBLY IN  
THE LIGHT OF THE CONSTITUTIONAL AMENDMENTS IN 2015**

**VAHE BAGHDASARYAN**

---

*Public Administration Academy of the Republic of Armenia*

---

The article presents the relations between the President of RA and the National Assembly after the amendments to the Constitution of RA introduced in 2015. As a result of the study, the change of the volume in the jurisdiction of the President of RA and the parliament was discussed in terms of the parliamentary system of government, simultaneously carrying out some comparative analysis with the powers available in the semi-presidential system of government.

**Keywords:** President of RA, National Assembly, constitutional amendments, parliamentary system of government, Constitution, state governance model.

*Ներկայացվել է խմբագրություն 28.11.2020  
Երաշխավորվել է տպագրության 11.12.2020*